ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

15 փետրվարի 2019 թ.
№ 2 (1036)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 53-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑԻՆ

ՀՀ ԿԳ նախարար Արայիկ Հարությունյանը հավաստագրեր և միանվագ կրթաթոշակներ հանձնեց «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթի՝ տարբեր ոլորտներում հաղթող ուսանողներին:

Մանկավարժական համալսարանից հաղթող ճանաչվեց 4 ուսանող՝ բնագիտական ոլորտում Էլյա Խաչատրյանը (1-ին տեղ), հայագիտության ոլորտում Զվարթ Ամբրոյանը (2-րդ տեղ) և Մարինե Սահրադյանը (3-րդ տեղ), իսկ հասարակագիտական ոլորտում՝ Անահիտ Հովակիմյանը (3-րդ տեղ):

ԿԳ նախարարը շնորհավորեց մրցույթի հաղթողներին և կոչ արեց լինել ազատ, քննադատող, նախաձեռնող և նպատակասլաց, օգտագործել նոր Հայաստանի ընձեռած հնարավորությունները և մասնակցել երկրի առաջընթացին ու զարգացմանը:

ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատված մրցութային հանձնաժողովը բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերով հաղթող է ճանաչել ՀՀ 15 բուհերի 37 ուսանողների, 7 ոլորտներում (բնագիտություն, հասարակագիտություն, հայագիտություն, հումանիտար, բժշկություն, ճարտարագիտություն և մշակույթ-սպորտ):

2018 թվականին «Լավագույն ուսանող» մրցույթի 1-ին տեղի համար հաղթող է ճանաչվել՝ 14, 2-րդ տեղի համար՝ 12 և 3-րդ տեղ՝ 11 ուսանող:

ՄԵՐ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ. ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԻՆՔԸ

«Գիտե՞ս ինչ, կյանք է՝ և մի ակնկալիր անփոթորիկ ծով. և եթե խորտակվում ես՝ մեղքը քոնն է և ոչ թե փոթորկինը, քանի որ փոթորիկը ծովն է: Ո՞ւր է խարիսխդ: Խարիսխդ»:

Հ. Մաթևոսյան «Մեծամոր»



Վերջին շաբաթներն էին, ու մենք համարյա գիտեինք, որ նա իր երկրավոր կյանքի վերջին ծեսն է ծրագրել՝ հրաժեշտ տալու ծառին ու խոտին, քարին ու ջրին, որոնց ծննդաբանությունը կարող էր անել եւ ձեւակերպել նրանց միստիկական ապրելակերպը: Բնության մեջ նա դառնում էր Ինքը. այլեւս գոլ քաղաքի լռակյաց, ինքնամփոփ նյարդակծիկը չէր, այլ տիեզերական մարդ՝ իր՝ Նահապետի վերջին աշնան վերջին գույների ու ձայների հետ սքանչելիորեն ներդաշնակ:

➤2

ՄԵԿ ԲԱՌՈՎ՝ ՕՈՒԼՈՒ

Ես Արմինեն եմ, տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողուհի:

Մագիստրարուրայի երկրորդ կուրսի առաջին կիսամյակն անցկացրել եմ կրթության ոլորտում բավականին բարձր ցուցանիշներ ունեցող երկրներից մեկում՝ Ֆինլանդիայում: Ֆինլանդիայի Օուլուի համալսարանում ուսանելը մասնագիտական կրթությանս ընթացքում ունեցած իմ ամենամեծ ձեռքբերումներից մեկն է եղել: Տեսնելով ծրագրի հայտարարությունը՝ երբեք չէի կարող երազել անգամ, որ արտերկիր մեկնելու հնարավորություն ստացող երջանիկներից եմ լինելու:

Ֆինլանդիա մեկնել եմ Erasmus+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում, որպես փոխանակվող ուսանող: Ծրագրին մասնակցելու հիմնական երկու նախապայմանը բարձր առաջադիմությունն ու օտար լեզվի (անգլերենի) իմացությունն է: Հաղթահարելով հարցազրույցը՝ ես մեկնեցի դեպի ցուրտ ու հեռավոր Ֆինլանդիա՝ բացահայտելու անսահման ջերմ ու բարի մի աշխարհ:

Սովորելով այնտեղ՝ ես ինձ կրթությամբ ապրող ու շնչող այդ հասարակության լիակատար մասնիկն էի զգում:

➤2

ԹՈՒՄԱՆՅԱՆ 150

ՄԵՐ ՈՒԽՏԸ

Մենք ուխտ ունենք՝ միշտ դեպի լույս,
Ու գնում ենք մեր ճամփով,
Մրրիկներով պատած անհույս,
Սև խավարով, մութ ամպով:

Մենք անցել ենք արյան ծովեր,
Սուր ենք տեսել ու կրակ,
Մեր ճակատը դեմ ենք արել
Մրրիկներին հակառակ:

Ու թեպետև պատառ-պատառ
Մեր դրոշը սրբազան,
Ու մենք չունենք տեղ ու դադար-
Երկրից երկիր ցիրուցան:

Բայց գնում ենք մենք անվեհեր
Ձարկերի տակ տակ չար բախտի,
Մեր աչքերը միշտ դեպի վեր՝
Դեպի լույսը մեր ուխտի:

ՄԵՏՅԱՆ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ

:

«Մանուկների աշխարհը վաղուց ի վեր բոլոր երկրային, հոգեպարար բախտավորություններից ինձ համար ամենաբարձրն է եղել: Նրանց կրթելը աշխարհիս երեսին ամեն բան է ինձ համար ու դեռ ավելին»:

Խաչատուր Աբովյան

Հայ ժողովրդի զավակնե՛ր, դուք կարդացեք Մովսես Խորենացի, Եղիշե, Նարեկացի, Խաչատուր Աբովյան, Ռաֆֆի, Ալիշան, Պեշիկթաշլյան և կտեսնեք, թե ով ենք մենք:

Կոմիտաս

ԻՆՔԸ

➢1 Հերթական մի դաս՝ խոսքի ու ներկայության, մինչ գունաթափվող խոտը դաժանորեն արագ էր սառչում, ու խարույկը՝ դժկամորեն վառվում: Տխուր հպարտություն կար՝ այդ պահին մոտ լինել նրան, ավելի մոտ՝ անշփոթ կեցվածքին, որը հետո էլի չէր բացակայելու, այլ վերադառնալու էր ուրիշ կերպերով (բառ, միտք, ոգի)՝ ամեն անգամ վերահաստատելու իր հարատեւությունն ու փորձելու մեր ուշիմ լինելու կարողությունը, որովհետեւ կյանքը վերահիմաստավորելու առաքելությունը միայն ընտրյալին է տրված:

(Կարելի էր ասելիքն իջեցնել հուշագրության մակարդակի՝ «Մի անգամ Վարպետի հետ...», կարելի էր էժան պրծնել, կցկտուր պատմություններ ճոռոմելով, ու չփորձել մոտենալ իրական մեծությանը՝ փոքրությանը հատուկ գլուխ պահելու,- ցավեցնելու,- համազգային ավանդական հունարով: Բայց սա եւս առաջադրանք է, որն Ինքն է լռելյայն պատգամել՝ չի՛ կարելի):

Ուրեմն՝ Ինքը: Վարպետը: Հրանտ Մաթեւոսյանը: Ապշեցուցիչ է իրադրությունները, ավելի ստույգ՝ հոգեւոր մթնոլորտը կանխատեսելու նրա ձեռնհասությունը. Ինքն էր, դեռ տարիներ առաջ, վախով տեսել մեր հոգին՝ ուրիշը վերծանելիս: Ապա հայրենիքն այնքան «զորացավ», որ բիցեպսը հաղթեց ուղեղին, սապոգները մտան դպրոց, անճանաչելիորեն աղավաղվեց մայրենին, մեր վարքն ու բարքը, եւ, իր իսկ համոզմամբ, ազգովի գրեցինք «հոկտեմբերի 27-ի» խայտառակ սցենարը: Վերջապես ունենալ Հրանտ Մաթեւոսյանի ոսկի հայերենն ու պաշտոնապես խոսել ինչոր կավատային լեզվով. նրա աչքերով համաստվածային խորքը տեսնելու հնարավորություն ունենալ ու մնալ այսքան կաղ ու կռնատ. կամովին, վերջին հարբեցողի պես, երգիծանքի վերածել կյանքը: Ինքը գիտեր այս ամենը, Ինքը սարսափով էր տեսնում ու կախականջներին կանխատեսում վատթարը: Որովհետեւ երկիրը կենդանի օրգանիզմ է, այլ ոչ մի բուռ ավազ, որը թափվում է մատների արանքից. Երկիրը մենք ենք, ու երեւի նրան հերթական անգամ փրկելու համար մեզնից պահանջվում էր ավելի շատ կամք ու տղամարդկություն, ավելի շատ սրտացավություն, քան երբեւէ, ու ավելի շատ խելք, քան երբեւէ: Կամ՝ «Թե՞ մենք ունակ չենք նվիրումի»,- Ի՛նքն է ասել:- «Թե՞ մեր տված արյունը բազում աշխարհամարտերի՝ մեր տված արյունը չէր - տուրք էր կեսարներին: Թե՞ մեր ցմրուրս զոհողությունները հպատակի մեր տուրքերն էին օտար տիրակալներին: Թե՞ մարդկային մեր շքեղ շնորհների բացարձակումները այլ ժամանակների ու երկրների ապարանքներում-շնորհի բացահայտումն էին ի տես մեզ իշխողների»: Ինքն է գրել: Այսպես, հարցը դրված կտրուկ ու տղամարդավարի՝ իշխա՞ն ես, թե՞ հպատակ. կամ թեկուզ քրիստոնեավարի՝ տե՞ր ես: Զարմանալի՞ է, որ մեր (այսինքն՝ արյունակից) Վարպետին գնահատողն էլ էր այլազգին, հասկացողն էլ: Չարենցը դաս չեղավ, ու փրփրաբերան ընկեցիկն իր դարավոր, անմեկնելի չարությամբ էլի թունավորեց (փորձեց թունավորել) Հրանտ Մաթեւոսյանին: Բայց Ինքը բնազդաբար ճիշտ արահետն էր ընտրել, թե՞ ճիշտ արահետն էր նրան գտել: Վայրահաչոցը կար ու կա. տեսեք, թե ինչ կատարելության է հասնում համահայկական միակ բրենդը՝ հոշոտել լավին: Սովալլուկ փաղանգի վերջին հուսահատ փորձը նրան ուրացող դարձնելու զուր տվայտանքն էր, բայց Ինքը պինդ էր, որովհետեւ գիտեր, որ եղբորը չեն ուրանում, եւ որ գրասեղանին դրված թուղթը մաքուր պիտի լինի, իսկ գրիչն՝ աներեր:

Եվ փառք Աստծո, որ Ինքն իր թնդության մեջ բարի սամարացի էր ու առերեւույթ փխրունության մեջ՝ ի բնե անկոտրում: Եթե գրող էր պահանջվում՝ Ինքը եղավ. եթե ճշմարտախոս էր պահանջվում՝ Ինքը եղավ. ու եթե զոհ էր պահանջվում՝ էլի Ինքը եղավ: Մեր կիսատպռատության ու ծանծաղամտության զոհը: Հիմա Ինքը ֆիզիկապես չկա, այսինքն՝ սթափեցնող ներկայությունը, ու այդ անսահմանորեն իմաստալից տեղը, մատուռը նյարդաթուլագար թափթփուկներն անապատի վերածեցին՝ փոխարենն այնտեղ լցնելով ինքնագոհության, կասկածելի գրաճանաչության աղբը: Որովհետեւ չկա իսկական Տերը՝ Խազեինը, ու հիմա իրենք անտեր են, կինանտրոպիայի նորագույն տեսակ՝ դավաճանի կարմիր թեւկապով:

Միամտություն կլինի կարծել, թե Սարոյանն իր ժառանգական հայկականությունն էր ցույց տալիս՝ ասելով. «Իմ գրվածքները կընթերցվեն կրկին ու կրկին»: Մեծ մարդիկ, փառահեղ մարդիկ լավ գիտեն իրենց հարկը: Ինքը եւս գիտեր («...բայց դուք կմնաք անտեր: Վախենամ, որ կմնաք հովիվը կորցրած ոչխարի պես, որին գայլը կուտի»), ու Ինքը եւս գիտեր իր ստեղծածի գինը: Որովհետեւ էլ որտե՞ղ է վերջանում հազարամյա կոծն ու պարտասությունը եւ սկսվում մեծ աշխարհին հպարտ հայացքով նայելու քաջությունը. գիրը՝ խորակրկիտ, միտքը՝ խրոխտ, ներուժը՝ անչափելի:

Բայց որպեսզի անդառնալիորեն չտարրալուծվենք այսօրվա քաոսի մեջ, համոզված պիտի լինենք, որ ողջամտությունը, ի վերջո, մոտ է լույսին ու լուսապսակին (հրոսակի, տիրացվի, վարժապետի ու հարճի տարածք չէ սա), ինչպես Հրանտ Մաթեւոսյանն էր այդքան մոտ՝ գրչով, խոսքով, ինքնությամբ:

Եվ Ինքը հաղթեց: «Նա հաղթեց,- ինչպես մի անգամ գրեց Սարոյանի մասին,- հաղթեց ու կանգնեց նույնպես հաղթած իր եղբայրների կողքին՝ Սարոյանի, Չարենցի, Խաչատրյանի, Թամանյանի...»: Որովհետեւ որտեղ Ինքն էր բնակվում, եւ բնակվում է, մահը չունի տարածք եւ իշխանություն. իր նոր՝ դեռեւս հնարավոր տիրույթում, դեռեւս հնարավոր հայրենիքում, օրհասական արթնացումով մկրտվելու է Հրանտ Մաթեւոսյանի քաջ ժողովուրդը. իր որդիների ժողովուրդը՝ անխառն ու բացառիկ:

ՍԱՄՎԵԼ ՄԿՐՏՉՅԱՆ



ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

...Մենք անընդհատ ասում ենք՝ չենք արել, չենք արել...Ո՞վ էր անելու, ինչո՞ւ չի արել: 1988 թվականից հետո բոլոր հաջորդ իշխանությունները կրկնել են նախորդների սխալները և ավելացրել են սեփականը: Մենք ինչո՞վ ենք, օրինակ, լավը բաբելացիներից, ասորեստանցիներից, մյուսներից, որոնք կորան գնացին, գուցե մենք էլ ենք կորել, պարզապես դա չենք գիտակցում...

...Պետք է մտածեինք պահանջատիրոջ մասին և ոչ պահանջատիրության: Պետք է սիրեինք այս Հայրենիքը, հոգայինք այսօրվա հոգսը: Այլապես, հնարավոր է, վաղը պահանջատիրությունը բավարավի՝ մեջտեղը պահանջատեր չլինի, մանավանդ որ այսպես մի անգամ արդեն եղել է. ձեզ Երզնկայից Շուշի երկիր ենք տալիս, բայց ժողովուրդ չունեք...

...Երկրները առհասարակ պարտվում են իդեոլոգիաների պարտությունից հետո, մշակույթների պարտությունից հետո, երկրները, պետությունները զոր ու զորքով գրոհում են, իհարկե, մշակույթների նախնական գրոհումներից հետո: Եվ մի մշակույթը տեղի է տալիս մի այլ մշակույթի, որից հետո հաջորդում է գրոհող երկրի զորքերի ներխուժումը...

ՄԵԿ ԲԱՌՈՎ՝ ՕՈՒԼՈՒ

➢1 Սկզբում որոշակի հարմարվողական խնդիրների հանդիպեցի, որոնք կարողացա արագ հաղթահարել օտարերկրյա իմ ընկերների աջակցությամբ:

Լինելով Օուլուում՝ ես բացահայտեցի, թե որքան լայն ու ընդգրկուն է կրթության աշխարհագրությունն իրականում, և այն սեփական երկրի կրթական համակարգի հիմնախնդիրների և որոշակի օրենքների տիրապետումը չէ միայն: Կան համաշխարհային ուշադրության արժանի խնդիրներ, որոնց մասին մենք՝ որպես կրթության ոլորտի ներկայացուցիչներ, պարտավոր ենք իրազեկ լինելու: Օուլուն համալսարանական քաղաք է, որտեղ ապրում և սովորում են աշխարհի տարբեր երկրներից ժամանած ուսանողներ՝ մասնագիտական տարբեր հետաքրքրություններով և նախադրյալներով: Խմբային աշխատանքները, փորձի փոխանակումը, անվերջ քննարկումներն ու կրթության տարբեր մարտահրավերներին այլընտրանքային լուծումների առաջադրումն ուսումնական առօրյայի անբաժանելի մասն են կազմում: Համալսարանը հարուստ է ժամանակակից լսարաններով, գրադարանով և ուսումնական տարբեր միջոցներով, ինովացիոն կոնտրոնով, որոնք իդեալական պայմաններ էին ապահովում և՛ խմբային կամ անհատական աշխատանքի, և՛ հանգիստն ու առօրյան կազմակերպելու համար:

Վերադարձիս հաճախ ինձ տրվող հարցերից մեկն այն է, թե ինչն ինձ ամենից շատ տպավորեց Օուլուում: Այս հարցին ես ունեմ նույնքան պարզ պատասխան՝ ուսանողները: Բարձր մոտիվացիա, մասնագիտական և անձնային կոմպետենտություն, ինքնուրույնություն, ստեղծագործականություն, նպատակասլացություն, համագործակցային գիտակցություն, խմբային պատասխանատվություն... ու էլի կարելի է շարքը համալրել տարբեր որակներով, որոնք ես հասցրի նկատել նրանց մեջ: Ուսանող-դասախոս հարաբերություններն ավելի շատ ընկերական և կոլեգիալ բնույթ ունեին, դասերի ընթացքում քննարկվող հարցերն իրենց բովանդակությամբ մարտահրավերային էին, բազմաբնույթ, ուսանողներն իրոք մտահոգ էին ոլորտում առկա հրատապ խնդիրների լուծմամբ:

Լինելով ուսանող-փորձագետ՝ ես փորձեցի ուսումնասիրել և հասկանալ, թե ինչով է պայմանավորված կրթության նման բարձր մակարդակը և ուսանողների մոտիվացիան: Ընդամենը 5.4 միլիոն բնակչություն ունեցող երկիրն իր՝ կրթության ոլորտում թռիչքային ձեռքբերումների առաջին նախապայմանն է համարում որակյալ ուսուցիչների առկայությունը: Լինելով ամենապահանջվածը երիտասարդների շրջանում՝ այն միևնույն ժամանակ ամենադժվար հասանելի մասնագիտությունն է. դիմորդների ընդունելությունն իրականացվում է մի քանի փուլերով և արդյունքում միայն 15%-ին է հաջողվում կրթություն ստանալ տվյալ մասնագիտությամբ: Տեղացի ուսանողների համար կրթությունն անվճար է, իսկ միջազգային ուսանողներն ունեն տարբեր կրթաթոշակներից օգտվելու բազմազան հնարավորություններ: Այսպիսով՝ ինձ բախտ էր վիճակվել սովորել և համագործակցել լավագույն ուսանողների հետ:

Օուլուում ուսանողական կյանքը գունեղ էր ու ակտիվ: Մեր համալսարանական փոքրիկ հայկական համայնքով՝ ընդամենը 3 ուսանողներով մենք մասնակցեցինք նաև ամենամյա մշակութային փառատոնին (Cultural festival) ՝ օտարերկրյա ուսանողներին հյուրասիրելով

մեր ավանդական ճաշատեսակներն ու նրանց ներկայացնելով մեր երկրի դարավոր մշակույթն ու ազգային խորհրդանիշները:

Բազմամշակութային միջավայր, կրթական բարձր գիտակցությամբ ուսանողներ, բոլորին հասանելի ժամանակակից տեխնոլոգիաներ, ակտիվ ու գունեղ համալսարանական կյանք, ջերմ ու բարեհամբույր պրոֆեսորադասախոսական կազմ, մշակութային իսկական հրավառություն... մեկ բառով՝ Օուլու...

Արմինե ԽՐՈՅԱՆ

«Ապրելու ապրիլ». գիրք ապրիլյան քառօրյայի հերոսների մասին

«Դու ինձ ստիպեցիր հիշել այդ չարաբաստիկ օրերը, աղջի՛կս: Սա կարևոր նախաձեռնություն է, հանձնի՛ր տպագրության». ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակից հերոսներից մեկի մոր այս խորհրդով առաջնորդվեց Մանկավարժական համալսարանի Բանասիրական ֆակուլտետի ուսանողուհի Էմմա Սիմոնյանն ու հստակ որոշեց՝ գրի առնել հերոսամարտի մասնակիցների հետ զրույցներն ու այն հանձնել տպագրության՝ «Ապրելու ապրիլ» մակագրությամբ:

2-րդ կուրսի ուսանողուհին քառօրյայի մասնակից տղաների տարեկիցն է. քայլերը կատարող ուսանողուհու համար հեշտ չէ 70 էջի սահմաններում ամփոփել գոյապայքարի փաստագրությունը և հույս հայտնեց, որ այն կունենա շարունակություն:

Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աելիտա Դոլուխանյանը չթաքցրեց՝ անչափ հուզված է, բայց և ուրախ, որ ստեղծվեց առիթ խոնարհումը հայտնելու գոյամարտի հերոսներին, նահատակների ծնողներին: Վերջինս հավատացրեց՝ ամեն անգամ նրանց անունը լսելիս կամ նկարը տես-

հենց այդ փաստն ու երազը, որ գարնանային դաշտում զիվորների կռվի դրվագներ էին հիշեցնում, մղեցին Էմմային հանդիպել պատերազմի մասնակիցներին, զոհվածների ծնողներին ու ծառայակիցներին:

Հերոսների փնտրտուքը Էմմային ուղղորդեց մեր երկրի տարբեր մարզեր. հանդիպումներն ու զրույցները որքան տարբեր էին, այնքան էլ՝ նման, բնորոշ մի քանի գծերով. «Երիտասարդներին հերոս կոչելիս նրանք շիկնում էին, փոքր-ինչ բարկանում և պահանջում իրենց այլևս այդպես չկոչել: Նրանց կարծիքով, հերոս էին միայն իրենց նահատակված ընկերներն ու նրանց մայրերը»,-պատմում է ուսանողուհին ու հավելում՝ տղաներից շատերն էին ցանկանում եկեղեցում զրուցել, հանդիպել. գուցե դա ինչ-որ չափով օգնում էր նրանց:

Հեղինակը գրքի վրա աշխատել է շուրջ 6 ամիս, խոստովանում է՝ պատերազմից երկուսուկես տարի անց էլ կորցրած ընկերների մասին խոսելիս տղաների աչքերը խոնավանում էին, չէին կարողանում թաքցնել վիշտը, որը փոխանցվում էր նաև իրեն, ապա նաև ընթերցողին:

Մանկավարժական համալսարանում կայացած գրքի շնորհանդեսին հրավիրված էին նաև հերոսները, զոհված զինվորների ծնողներն ու հարազատները՝ ևս մեկ անգամ համոզվելու, որ ապրիլյան պատերազմի մասին գրիչները դեռ չեն լռել, գրելու են այնքան ժամանակ, քանի դեռ ապրում է այդ օրվա հույզերն ու տագնապները տեսած վերջին ժամանակակիցը:

«Ապրիլյան քառօրյայի, տղաների սխրանքների մասին մենք ենք պատմելու եկող սերունդներին: Աղբյուր-հուշարձաններ, ասք-լեգենդներ դարձած տղաների հերոսությունների մասին կպատմի նաև այս գիրքը, որում գեղարվեստական շաղախով ներկայացված է իրականությունը՝ հայրենիքի պաշտպանության վեհ գործը»,-նշեց Բանասիրական ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանը, ով նաև գրքի խմբագիրն է: Դեկանը վստահեցրեց, որ գրական առաջին նելիս փոթորկվում է ամեն հայ մարդու ներաշխարհը. «Քրիստոնեության մեջ կա հավատ, որ նման նահատակները հավերժորեն ապրելու են Աստծո կողքին. ես ուզում եմ որ մենք դրան հավատանք»,-հավելեց Աելիտա Դոլուխանյանը:

Բանասիրական ֆակուլտետի դեկանի տեղակալ Նաիրա Խաչատրյանն էլ գրքին անդրադարձավ գրականագիտական տեսանկյունից՝ ընդգծելով, որ ապրիլյան քառօրյայի թեմայով գրված բազմաթիվ գրքերի կողքին «Ապրելու ապրիլ»-ը, որպես տարեգրություն ու վավերագրություն, կփոխանցվի ապագային:

«Պատերազմի մասին գրելու իրավունք ունեն նրանք, ովքեր մասնակցել են ռազմական գործողություններին, սակայն պատերազմի 96-ժամյա տագնապներն ու հույզերն այնպես են ներծծված յուրաքանչյուրիս մեջ, որ դարձել են ոգևորության, նոր սխրանքներ կատարելու, հաղթանակներ գրանցելու աղբյուր: Մեր պատվի հանդեպ ցանկացած ոտնձգություն դատապարտված է պարտության, քանի դեռ գրվում են այսպիսի գրքեր, ծնվում են հերոսներ ծնող մայրեր, և կա այսպիսի ժողովուրդ, որ մեծարում է զինվորին ու հպարտանում նրա հերոսությամբ»,-նշեց Նաիրա Խաչատրյանն ու ընդգծեց՝ գրքի լույսընծայմամբ Էմմա Սիմոնյանը հավաստեց, որ մտածել է ռազմի դաշտում կռվող զինվորի պես, հայրենիքի մի մասնիկն է զգացել և առաջ նայել՝ առանց ծանրութեթև անելու հայրենիքին պիտանի լինելու մղումը:

Զինվորներն ու հերոսների մայրերը շնորհակալություն հայտնեցին գրքի լույսընծայման համար, որը եկող սերունդներին հնարավորություն կտա ծանոթանալ պատմության հերոսական էջերին, հիշել նրանց անուններն ու ևս մեկ անգամ համոզվել, որ հայ զինվորը քաջ է, անվախ, ժողովուրդը՝ պայքարող, անարդարության առաջ գլուխ չխոնարհող:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԱՅԲԲԵՆԱՐԱՆԻ ՁԵՌԱԳԻՐ ՏԱՌԵՐԻ ՇՈՒՐՋ

Հայաստանի Հանրապետության այբբենարանների բովանդակության և կառուցվածքի հիմնախնդիրները մշտապես գտնվում են կրթության ոլորտի առաջընթացով շահախնդիր մարդկանց և հաստատությունների ուշադրության կենտրոնում: Արդեն երկրորդ անգամ ՀՀ ԿԳՆ Լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանի նախաձեռնությամբ փետրվարի 6-ին Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում այբբենարանի հեղինակների, տառաստեղծների և Լեզվի կոմիտեի ներկայացուցիչների հետ անցկացվեց քննարկում այբբենարանի ձեռագիր տառատեսակների միասնականացման հարցի շուրջ:

Ձեռագիր տառատեսակների միասնականացմանը կողմ բոլոր մասնակիցների մոտեցումներն ու տեսակետները տարբեր էին: Ըստ այբբենարանի հեղինակների և Լեզվի կոմիտեի նախագահի՝ պետք է այբբենարաններում և գրատետրերում միասնական, միօրինակ դարձնել տարբեր կերպ գրվող տառերի ձևը:

Տառաստեղծներ Էդիկ Ղաբուզյանը և Ռուբեն Թարումյանը տուրք տալով վայելչագրությանը՝ առաջարկում էին հայերենի ձեռագիր բոլոր մեծատառերը գրել տողի վրա, մեկնաբանելով դա համաչափության և՛ երեխաների կողմից դյուրընկալության տեսանկյունից: Մեծատառերի կառուցման իրենց սկզբունքներն առաջարկելով՝ նրանք գտնում էին, որ կարելի է վերադառնալ ակունքներին, իսկ Էդիկ Ղաբուզյանն առաջարկեց դպրոցներում «Վայելչագրություն» առարկա մտցնելու հարց բարձրացնել:

Լեզվի կոմիտեի նախագահը բոլոր մեծատառերը տողի վրա գրելուն նույնացնելն անընդունելի համարեց:

«Մեր պետությունը, ելնելով ուսուցման շահերից, որոշել է միասնականացնել տառերը, որոշ դեպքերում՝ պարզեցնել,-ասաց Դավիթ Գյուրջինյանը:- Հանրությունն այսօր մեզնից օգտակար որոշումներ է ակնկալում...»:

«Գործածության մեջ դրված դպրոցական ձեռագրատեսակների տարբեր լրակազմերում առկա են որոշ մեծատառերի զուգաձևություններ (Շ, Ջ, Պ, Տ), որոնք ցանկալի է միօրինակացնել-միասնականացնել գործող բոլոր այբբենարաններում, տարրական դասարանների բոլոր գրատետրերում և ուսումնաօժանդակ նյութերում,-ասաց Լիլիթ Տեր-Գրիգորյանը:-Թերևս անհրաժեշտություն կա վերանայելու նաև մի քանի այլ մեծատառերի ու փոքրատառերի տառապատկերների պարզեցման հարցը, քանի որ վեց տարեկան երեխային մեկ հնչյունի համար միանգամից չորս տառ է ուսուցանվում՝ չորս տառապատկերով՝ տպագիր մեծատառ և փոքրատառ, ձեռագիր մեծատառ և փոքրատառ, և ուսուցման գործընթացը մատչելի դարձնելու համատեքստում, կարծում ենք, կարելի է քննարկել այդ հարցը՝ անշուշտ ոչ մի պարագայում չվնասելով գործին»:

Այբբենարանի հեղինակ Լիլիթ Տեր-Գրիգորյանը մտավախություն հայտնեց, կտրուկ փոփոխությունների շուրջ, կարծելով, որ դրանք չեն ընդունվի հասարակության մեջ ձևավորված ավանդույթների պատճառով: Նրա կարծիքով «տառատեսակների և հատկապես դպրոցական տառատեսակի կտրուկ, հաճախակի ու անհարկի փոփոխությունները ցանկալի չեն, ուստի ձեռագրային միասնական տառատեսակի ընտրությունը պետք է արդարացված և առավելագույնս հիմնավորված լինի թե՛ ուսուցողական, թե՛ գեղագիտական տեսանկյուններից»:

Այբբենարանի հեղինակ Ջուլիետա Գյուլամիրյանը հարցը դիտարկեց տառուսուցման մեթոդիկայի տեսանկյունից՝ հավելելով, որ տարատեսակների ընտրության խնդրին բախվել են նաև արևմտահայ դասագրքերը կազմելիս: Նրանք դեմ եղան փոփոխություններին և դա հիմնավորեցին իրենց ավանդույթների դիտանկյունից:

Արդյո՞ք հասարակությունը կհասկանա տառաստեղծների առաջարկած փոփոխությունները՝ մտահոգվեց Ջ. Գյուլամիրյանը և փաստեց, որ տառատեսակները պետք է կատարելագործվեն, բայց հանդիպումը տառաձևերի փոփոխություններ չէր ենթադրում:

Այբբենարանի հեղինակ Վաչագան Սարգսյանն էլ առաջարկեց առայժմ վեց՝ Շ, Յ, Պ, Ջ, Տ, Ց ձեռագիր մեծատառերի գրությունը մոտեցնել տպագրին:

Այսպիսով տառաստեղծների և մանկավարժների կարծիքները չմոտեցան իրար: Դավիթ Գյուրջինյանն էլ ասաց, որ առայժմ հասունացել է 6 տառի փոփոխման հարցը, միաժամանակ կարևորեց ներկա հանդիպումն ու դրա շարունակականությունը խնդրի լուծման համար:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողներս վերջերս անցկացրինք հերթական գործնական պարապմունքը «Մանկավարժական հետազոտության մեթոդաբանություն» դասընթացից: Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի դոցենտ Ս. Սիսյանի ղեկավարությամբ «Ֆոկուս» խմբային մեթոդով իրականացրինք քննարկում:

Նշենք, որ «Ֆոկուս» խմբային քննարկումը վարում է հետազոտողը նախօրոք պայմանավորված մասնակիցների ոչ մեծ խմբի հետ այն դեպքում, երբ անհրաժեշտ է պարզել, թե ինչ է մտածում տվյալ նպատակային ոլորտը ներկայացնող մարդկանց խումբն իրեն հետաքրքրող խնդրի վերաբերյալ: Տվյալ գիտահետազոտական մեթոդի արժեքն այն է, որ, որպես տեղեկատվության հավաքագրման հիմնարար աղբյուր, իր ազատ բնույթի շնորհիվ այն թույլ է տալիս ստանալ հետազոտության համար անսպասելի տեղեկություններ:

Հիմնվելով արդեն ուսումնասիրած մի շարք գիտահետազոտական որակական և քանակական մեթոդների վրա, որոնք մենք անպայման կիրառելու ենք մեր մագիստրոսական ատենախոսությունների հետազոտությունն իրականացնելիս (դիտում, զրույց, անկետավորում, case study և այլն), վաղօրոք մշակել էինք մեր մասնագիտության համար արդիական, թեմատիկ լայն ընդգրկում ունեցող ֆոկուս խմբային քննարկման թեման՝ «Արդյունավե՞տ է արդյոք 5-րդ և 6-րդ դասարանների մայրենիի դասավանդման գործընթացը կազմակերպել միասնացած (ինտեգրված) ուսուցմամբ», որի շուրջ էլ ծավալվեց գործնական դասը: Տարբեր, հետաքրքիր, երբեմն նույնիսկ իրարամերժ կարծիքներ ու մեկնաբանություններ եղան:

Ի դեպ, «Ֆոկուս» խմբային քննարկումն իրականացվեց դերային խաղ մեթոդի միջոցով, այսինքն մենք՝ ուսանողներս, ստանձնեցինք տարբեր ոլորտների մասնագետների դերեր, որի շնորհիվ կողք կողքի քննարկմանը մասնակցեցին և մասնագիտական կարծիքներ արտահայտեցին «ուսուցիչներ, ծնողներ, աշակերտներ, ԿԳՆ առաջատար մասնագետ, հոգեբան, լրագրող, նույնիսկ ֆիզիկոս»:

Քննարկան սկզբում մոդերատորը բաժանեց ,Ֆոկուսե խմբի 13 անդամներից յուրաքանչյուրի համար նախապես պատրաստված անհրաժեշտ նյութերն ու պարագաները (տվյալների հավաքագրման թերթիկներ, ինքնագնահատման քարտեր, ձայնագրիչներ և այլն), առանձնացրեց իր նշումների համար նախատեսված նոթատետրն ու գրիչը, միացրեց տեսանկարահանող սարքը, ապա էլեկտրոնային գրատախտակի վրա տեսաներկայացմամբ ցուցադրեց իր կազմակերպած փոքրիկ հետազոտության նպատակը, խնդիրները, պարզաբանեց քննարկմանն ուղղորդող հարցաշար: Խնդրո առարկայի շուրջ կարծիքներ հայտնեցին երկու «ուսուցիչ», որոնցից մեկը կողմ էր ուսուցման այս եղանակին, իսկ մյուսը նշում էր, որ առավել քան արդյունավետ կլինի ուսուցումը կազմակերպել նախկին ավանդական եղանակով և առհասարակ տարանջատել քերականական նյութը գրական երկից՝ ունենալով երկու առանձին դասագիրք: Կարծիք հնչեց՝ ի վերջո ուսուցման մեթոդներն ու եղանակներն օգտագործվում են աշակերտների համար գործընթացն առավել արդյունավետ դարձնելու նպատակով, և այս տեսանկյունից առաջնային է լսել հենց աշակերտի կարծիքը: Քննարկմանը ներկա «աշակերտն» ընդգծեց, որ իր համար հայոց լեզվի քերականական նյութը առավել հասկանալի և ընբռնելի է դառնում, երբ այն յուրացնում են գրական երկի՝ բնագրի շուրջ կատարվող աշխատանքի համաձիրում (ի դեպ, մեզ դասավանդող դասախոսը ծնողի դերն էր ստանձնել):

Գործնական պարապմունքին առանձնակի աշխուժություն և ստեղծագործական ակտիվություն հաղորդեց ֆոկուս խմբի քննարկմանը բնորոշ ձնագնդիկի էֆեկտը, երբ մասնակիցներից մեկն արտահայտում էր որոշակի կարծիք, ապա այն շղթայական ռեակցիա էր առաջացնում մնացյալ մասնակիցների մոտ, և նրանք, իրենց դերերին համարժեք, ոգևորված, հիմնավորում էին սեփական դիրքորոշումները: Նշենք, որ բոլորիս ակտիվ մասնակցությունը պայմանավորված էր ոչ միայն մի շարք գիտահետազոտական մեթոդների իմացությամբ, այլև նրանով, որ ուսումնաճանաչողական պրակտիկաների ընթացքում հնարավորություն էինք ունեցել գործնականում կիրառել միասնացած ուսուցման եղանակը:

Գործնական-հետազոտական պարապմունքն ուշագրավ էր նաև նրանով, որ քննարկմանը մասնակցում էր մայրենիի դասագրքի համահեղինակ Աշոտ Գալստյանը, որի կարծիքն այս հարցի շուրջ քննարկման բոլոր մասնակիցների համար շատ կարևոր էր: Նա մասնավորապես նշեց, որ տարրական դասարաններում նույնպես մայրենիի ուսուցման գործընթացը կազմակերպվում է միասնացած ուսուցման եղանակով, և այստեղ պետք է հստակ գիտակցել ուսուցման փոխհաջորդման հիմնախնդիրը: Միասնացած ուսուցման դեպքում այդ անցումն առավել սահուն պետք է ընթանա:

Յուրօրինակ դասի ավարտին Բանասիրական ֆակուլտետի դեկանը շնորհակալություն հայտնեց մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի դոցենտ Սուսաննա Սիսյանին և մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողներին՝ գիտահետազոտական ժամանակակից մեթոդներով հագեցած ճանաչողական դաս կազմակերպելու համար և հույս հայտնեց, որ այսօրինակ դասերը կկրեն շարունակական բնույթ:

Աստղիկ ԲՈՅԱՋՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողուհի

ՄԱՐԴՈՒ ԵՎ ԳՐՔԻ «ԱՆԴԱՎԱՃԱՆ» ԿԱՊՆ ՈՒ ԱՆՏՐՏՈՒՆՋ ՍԵՐԸ

Կյանքի այդ բազմերանգ խորհուրդը, նրբանկատ սերը, ուղղորդող ժպիտն ու սթափեցնող հայացքը ամփոփվում են մեկ բառի ներքո, որի անունն է գիրք: Ընդամենը չորս տառերի այս ինքնատիպ կապակցությունը ցույց է տալիս բովանդակային խորություն, հմայք, վերաբերմունքի ինքնատիպություն, հավերժության ու մարդկային ապրումների անվերջանալի բախումներ: Մարդու, առանձնապես ժամանակակից մարդու համար գիրքը հավատարիմ բարեկամ է, որի հետ կարելի է զրուցել անվերջ, կռվել, սիրել, ծնվել, թերևս ապրել: Կյանքի ոլորապտույտ ուղիներում գիրքը ու գրքի նկատմամբ մարդու վերաբերմունքը պայմանավորում են այս երկու օղակների մշտական կապն ու հավիտենության խորհուրդը: Գիրքն էլ մարդու նման ձգտում է դառնալ անհատականություն, և կյանքի մրցավազքում հաղթում են ընտրյալները, որոնց ի վերուստ վիճակված է նորի խորհուրդը, նորի ասելիքը, նորի հետ հաշվի նստելու գաղափարը: Արարված յուրաքանչյուր գիրք գրականության անեզր օվկիանում գտնում է իր ընթերցողին ու դասեր տալիս: Այլ հարց է, որ մեր օրերում գրականության հանդեպ սերը բխում է գրքի հանդեպ ունեցած մեր վերաբերմունքից: Քիչ է ասելը, թե գրականությունն ու գիրքը նեղացել են մարդուց, ունեն նրա մխիթարանքի, հոգածության ու խնամքի կարիքը: Եվ այս առումով պետք է նկատի ունենալ, որ գիրքը շփման ամենալավ ու ամենահուսալի միջոցն է: Մարդը ինքն է ընտրում իր հոգեկերտվածքին ու հայացքներին, մտածողությանն ու պահանջմունքներին հարիր գրականություն, և այն, որ ժամանակակից գրականությունը մնում է զգրոցներում և չի դառնում ուղենիշ, փոքրիշատե այդպես չէ, քանի որ մենք իսկապես ունենք ժամանակակից շատ լավ գրողներ, որոնք, չգիտես ինչու, մի փոքր անտեսվում են և ավելի մեծ ուշադրության կարիք ունեն: Կարծրատիպը, թե այսօր քիչ են կարդում, սխալ է. դրա ապացույցը տպագրվող գրքերի շարունակական աճն է, տպաքանակի արագ սպառումներն ու գրադարաններում ուսանողների մեծ հոսքը: Այլ հարց է, թե ի՛նչ որակի և ի՛նչ ասելիք պարունակող գիրք է նախընտրում ժամանակակից մարդը: Այստեղ է, որ կանգնում ենք լճացման առջև, և նաև այստեղ է, որ անօդ տարածության մեջ հայտնված մարդու նման այս կամ այն ժանրի գիրքը տապալվում

է: Երիտասարդները զգալի չափով կարդում են «սրտի գործեր», և այստեղ նկատելի դրական գործոն է որակյալ թարգմանությունը, որը կամաց-կամաց բարի աչքով է նայում հայ գրականությանը: Մինչև խորշոմած իրականության մեջ անհատ-քաղաքացին փնտրում է հույսի ու լույսի շողեր, գրականությունն ու գիրքը նրան տալիս են անխափան բանալի, որով համասփյուռ լույսն ու արեգակի շողերը բույն են դնում յուրաքանչյուրիս հոգում: Ուրեմն պետք է կարդալ, կարդալ ապրելու, կարդալ սիրելու, կարդալ ներելու համար:

Կարլեն ՆԱԶԱՐՅԱՆ
բանասիրական ֆակուլտետ, 2-րդ կուրս

ԻՄ ՈՒՍՈՒՑՉԻ ՀՈԲԵԼՅԱՆԸ

Հայաստանի գրողների միությունում նշեցին գրող, թարգմանիչ, մշակույթի գործիչ Վալերի Պարանյանի ծննդյան 70-ամյակը: Գրողների միությունում այդ օրը Լոռվա և թումանյանական շունչն էր թևածում. եկել էին մարդիկ, ովքեր կյանքի այս կամ այն շրջանում շփվել էին հոբելյարի հետ, առնչվել նրա հուզառատ պոեզիային, գրական ժառանգությանը: Սրահում էին գրականության և մշակույթի անվանի գործիչներ Էդվարդ Միլիտոնյանը, բանասիրական գիտությունների դոկտոր Հենրիկ Բախչինյանը, Թատերական գործիչների միության նախագահ Հակոբ Ղազանչյանը, հասարակական գործիչ Նորա Հակոբյանը,Հայաստանի երգչախմբային ընկերության նախագահ, Կոնսերվատորիայի պրոֆեսոր Դավիթ Ղազարյանը, Կոմիտասի անվան լարային քառյակի առաջին ջութակահար և գեղարվեստական ղեկավար Էդուարդ Թադևոսյանը, հոբելյարի ընկեր, գրող Լևոն Ջավախյանը, «Լոռվա ձոր» հայրենակցական միության նախագահ Սերգո Երիցյանը, ընկերներ, բարեկամներ, լրագրողներ, աշակերտներ… Մի խոսքով ելույթների պակաս չէր զգացվում:

ՀԳՄ նախագահ Էդվարդ Միլիտոնյանն արժևորեց հոբելյարի դերը գրական ասպարեզում և նրան շնորհեց «Գրական վաստակի համար» մեդալ:

Այնուհետև գրական ցերեկույթի ընթացքը թումանյանական կոլորիտով համեմեց գրողի կրտսեր գործընկեր, բանասեր, մշակութաբան Գարիկ Էվոյանը:

Վալերի Պարանյանի գրական զարգացման ընթացքը հրաշալի ներկայացրեց գրող, «Ֆրիտյոֆ Նանսեն» հիմնադրամի նախագահ Ֆելիքս Բախչինյանը:

«Գանգրահեր կանաչի մեջ վեր ձգվող լեռնաշղթային իր հեքիաթները պատմող գետի ջրերը գալիս ու գնում էին հին ու նոր պատմություններ տանելով իրենց հետ: Ու այդ պատմություններին շունչ ու հոգի տվող ալավերդցիները ժայռերի գագաթներին ուղղված հայացքների հետ հոսող գետին էին նվիրում իրենց հուզառատ հույսերը: 1949 թվականին զգացմունքառատ այդ նույն վայրում ծնված և հասակ առած տղան որքան էլ պեղեր բնական գիտությունների, հասարակության ու մարդու իրավունքների մասին իրեն կանչող ոլորտները, այնուամենայնիվ, կյանքի ճանապարհին նրան ուղեկցողը իր զգացմունքառատ ապրումներն էին: Հենց այդ ապրումներն էին, որ բազմազբաղ առօրյայի մեջ երիտասարդին մղում են գրիչ վերցնել ու խոսել սեփական սրտի թրթիռների, հույսի ու լույսի հաշտեցումների, հոգու կանչերի մասին»,-գրողի գրական սկզբի մասին այս շեշտադրումով իր նախաբանն սկսեց Ֆ. Բախչինյանը:

Անդրադառնալով ճակատագրի հարվածների կիզակետում հայտնված Վ. Պարանյանի կյանքի բանաստեղծական անդրադարձներին՝ բանախոսն ափսոսանքով նկատեց. երանի չծնվեր «Ռեքվիեմ»-ը, բայց նաև շարունակեց, որ երկար լռությունից հետո բանաստեղծի գրիչն առավել բեղուն եղավ. «Զգացմունքների հեղեղ է Պարանյանի բանաստեղծական աշխարհում: Հեղեղ, որն իր հետ աներևակայելի ջերմություն է բերում, նրանով պարուրում ընթերցողին: Մանավանդ, երբ մաշկիդ վրա ու հոգով ես զգացել այն ծննդավայրը, որի զավակն է նույն գրողը: Եվ, մանավանդ, որ հարազատ են նրա խոսքերը, ինչպես՝ «Նժույգների պես լեռները ծառս են լինում խավարում…», և կամ՝

«Օ՜ , այնպես ծանր կուզեի լռել
Ինչպես լռում է գիշերով Լոռին
Ջորախոս Լոռին…»:

Թատերական գործիչների միության նախագահ Հակոբ Ղազանչյանը միության Ոսկե հուշամեդալով պարգևատրեց Վալերի Պարանյանին, ում շնորհիվ, մշակույթի բաժնի վարիչ աշխատելու տարիներին, Ալավերդի քաղաքում և շրջակա գյուղերում մշակույթը ծաղկեց, սկիզբ դրվեց «Թատերական Լոռի», «Բարեկամության մեղեդիներ» և այլ փառատոնների: Ինչպես նշեց Գ. Էվոյանը. «Ձորը ծայրից ծայր անցնելու դեպքում կարող եք հանդիպել Վ. Պարանյանի մշակութային գործունեությանը»:

«Որպես մարդու և գրողի՝ Վ. Պարանյանին և նրա ստեղծագործությանը ծանոթացել եմ վերջին տարիներին և հիացել եմ նրա պերճախոս լռությամբ»,-ասաց գրականագետ Հենրիկ Բախչինյանը:

«Ֆրանսիայում ցանկացած արվեստի ներկայացուցչի արտիստ են կոչում,-ասաց Վ. Պարանյանի ընկեր, գրող Լևոն Ջավախյանը,- դու ոտից գլուխ արտիստ ես, Լոռվա ձորում մի պայծառ լույս, որ լուսավորում է ամբողջ ձորը»:

«Հայրենի Ծաղկաշատ գյուղի գողտրիկ աշխարհը և ծաղկաշատցուն ես Վալերի Պարանյանի գրչով եմ հայտնաբերել, ում ստեղծագործություններում յուրաքանչյուր մարդ բնության ստեղծած ծաղիկ է, ժայռ է, քարափ է»,- ասաց գրողի համագյուղացի, լրագրող Լուսյա Մեհրաբյանը:

«Նա գալիս է շարունակելու այն գործը, որ մեր բնաշխարհի մեծերն են թողել, նա կարողանում է մեկտեղել բոլորին և ամեն ինչ: Նա հոգով մեծ մարդ է»,-ասաց Վազգեն Խաչիկյանը:

Ելույթի պատիվ էր տրվել նաև ինձ՝ խոսելու ֆիզիկայի իմ ուսուցչի և իմ գրական մուտքը ողջունած Վալերի Պարանյանի մասին:

«…Նա բոլորիս համար շուտով լավագույն ուսուցչի կերպար դարձավ, ով չէր ստիպում սերտել Գեյ Լյուսակի և Բոյլ-Մարիոտի՝ այն ժամանակ մեզ համար բարդ ու երբեմն անհասկանալի օրենքները, յուրաքանչյուր աշակերտի վերաբերվում էր որպես անհատի, հաշվի նստում նրա ներաշխարհի, խառնվածքի, հակումների հետ: Ավելին՝ կազմակերպում էր արշավներ՝ մեզ կապելով թումանյանական, և, ընդհանրապես, հայոց հրաշագեղ լեռնաշխարհին, և այսպես, մարդ-բնություն կապի միջոցով մենք փորձում էինք ընկալել ֆիզիկայի օրենքները: Նրա հետ և նրա շնորհիվ ամեն անգամ մենք նորովի էինք բացահայտում Քոբայրն ու Հաղբատը, Սանահինն ու Օձունը, Լալվարն ու Արագածը, հիանում էինք Դսեղի Ծովեր կոչվող լճերով: Այդ արշավների ընթացքում կիթառի նվագակցությամբ երգում էինք հենց իր՝ ընկեր Պարանյանի և Ռազմիկ Դավոյանի բանաստեղծությունների հիման վրա գրված երգերը:

Ընկեր Պարանյանի միջոցով ես՝ բարձր դասարանի աշակերտուհիս, որ տարված էի գրականությամբ և մասնավորապես պոեզիայով, ինձ համար հայտնաբերեցի Եղիշե Չարենցի, Ռազմիկ Դավոյանի, Հրաչյա Սարուխանի, Տյուտչևի պոեզիան: Ֆիզիկայի ուսուցիչ լինելուց զատ նա եղավ իմ գրական ուսուցիչը, ում շնորհիվ ես առավել սիրեցի գրականությունը: Իսկ ես եղա նրա բանաստեղծությունների առաջին ընթերցողը և հպարտ էի դրանով: Ահա ինչու, ընկեր Պարանյանի բանաստեղծական գրքերից ինձ համար առավել հարազատ է «Ես թռչում եմ Ամստերդամ» ժողովածուն, որտեղ զետեղված են այդ տարիներից ինձ ծանոթ բանաստեղծությունների մեծ մասը:

Վալերի Պարանյանը երգեր է գրում չքնաղ ծննդավայրի, հայրենիքի ու մարդկային սիրո մասին՝ իր հոգու անձնական ու անանձնական զգացողությունները դարձնելով գեղարվեստական խոսք ու պատկեր, որից ընթերցողն անպայման ջերմություն է քաղում, նաև լուսավոր թախիծ.

Քիչ է ասել՝ Վալերի Պարանյանն այն մարդն է, ով ափն ի բուռ լեցուն է մարդկային լավագույն որակներով, և բանաստեղծ, ում մտահորիզոնի լայնություններն ու մտքի թռիչքները հայրենի Լոռվա ձորերից ու քարափներից ձգվում են դեպի լուսաբացները.

Քարափներն են հիշում
Լուսաբացներն օրվա,
Քարափներն են հսկում
Փլատակներն օրվա,
Քարափներն են սգում
Կորուստները օրվա,
Փլվեց օրն իմ հոգում.
Գուցե ժա՞յռ եմ հիմա:

«Ես ուրախ եմ և հպարտ, ավելի մեծ նվեր, քան այսքան ընթերցասերների մի հարկի տակ հավաքվելը, դժվար էր երևակայել, իսկ հայրենիքին ծառայելու մի շատ կարևոր զենք կա՝ գրիչ վերցնելը»,-ամփոփեց հոբելյարը՝ շնորհակալություն հայտնելով Հայաստանի գրողների միությանը նախաձեռնության համար:

Շնորհավոր յոթ տասնամյա հոբելյանդ, Ուսուցիչ: Տասնամյակների հեռվից Դուք մեզ համար էլի նույնն եք՝ հավերժ երիտասարդ, Ալավերդի քաղաքի հմ. 2 միջնակարգ դպրոցի բոլոր աշակերտների համակրանքը վայելող մեր սիրելի ընկեր Վալերի Պարանյանը: Մենք կյանքի խորախորհուրդ դասեր ենք ստացել Ձեր անսահման բարությունից ու կյանքի փիլիսոփայությամբ հագեցած Ձեր լավատեսությունից, որոնք մեզ օգնել են հավատարիմ մնալ մարդ տեսակին ու կյանքի բարդ ճանապարհներին հասկանալ լույսի ու ստվերի իմաստը:

Ձեր իմաստուն ու հավատավոր բանաստեղծական աշխարհին մաղթում եմ միայն լուսավոր ու խաղաղ ընթացք և մեր բոլորի սերն ու ջերմությունը»:

Երջանիկ է նա, ով ունեցել է և ունի լավ ուսուցիչ. ես այդ երջանիկներից եմ:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժական համալսարանի հեռակա ուսուցմամբ համակարգի ուսանողները հյուրընկալել էին № զորամասի հրամանատարի թիկունքի և կոմունալ շահագործման գծով տեղակալ, մայոր Արթուր Ջիրոյանին և սոցիալ-իրավական հարցերով ավագ սպա, մայոր Սարգիս Սարգսյանին: Հանդիպումը կազմակերպվել էր բուհի Համալսարան-գործատու համագործակցության կենտրոնի և բուհի ուսանողական խորհրդի համատեղ նախաձեռնությամբ:

Ռազմական ոստիկանության պաշտոնյաների հետ ուսանողների հանդիպման նպատակն էր ծանոթացնել համակարգում ծառայության անցնելու պայմաններին, ընձեռած հնարավորություններին, իրավունքներին և պարտականություններին:

Մայոր Սարգիս Սարգսյանն ընդգծեց, որ աշխատանքի բնույթը հիմնականում հասարակական կարգի և անվտանգության պահպանումն է և հավելեց, որ 3 տարով կնքված պայմանագիրը թույլ է տալիս համատեղել ուսումն ու աշխատանքը:

«Պայմանագրային զինծառայության հաճախելու գրաֆիկն ավելի ազատ է՝ 2 շաբաթ աշխատանքային և նույնքան հանգիստ օրերով, իսկ ՀՀ-ում սահմանային պաշտպանության դեպքում՝ հավելավճարի և լրացուցիչ հանգստի տրամադրում»,-նշեց մայոր Ս. Սարգսյանն ու ծանոթացրեց նաև համակարգում աշխատելու ընձեռած առավելություններին՝ բժշկական ապահովագրությունից մինչև սոցիալական փաթեթ:

Ուսանողների հետ հանդիպմանը մայոր Արթուր Ջիրոյանն էլ անդրադարձավ հերթապահության ընթացքում տրամադրվող անվճար սննդին, տարվա ընթացքում տրամադրվող հավելավճարներին, ինչպես նաև բարձրագույն կրթություն ունեցողների համար մի շարք առավելություններին ու հնարավորություններին, հարցազրույցը հաջող անցնելու դեպքում նաև սպայի կոչման շնորհմանը:

Ծառայության պատասխանատուները պատասխանեցին ուսանողներին հետաքրքրող հարցերին և վստահեցրին, որ պատրաստ են արդյունավետ համագործակցության, իրենց շարքերը բանիմաց կադրերով համալրելուն:

Բուհի աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Արա Երեմյանը շնորհակալություն հայտնեց մայոր Արթուր Ջիրոյանին և մայոր Սարգիս Սարգսյանին հյուրընկալվելու համար և ընդգծեց, որ շատ կարևոր է հեռակա ուսուցման համակարգում ուսանողներին ևս պատվավոր աշխատանքում ներգրավելու հնարավորություն ընձեռելը:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ № 104 ԴՊՐՈՑՈՒՄ

Մեր դպրոցում եռուզեռ է, տոնախմբություն... Դպրոցն իր ջերմ գրկում հյուրընկալել է հայոց պարծանք Արկադի Տեր-Թադևոսյանին՝ Կոմանդոսին, նրա զինակից ընկերներին, Երևանի պետական մանկավարժական համալսարանի ամբիոնի վարիչ Սիդա Թոփուզյանին, դպրոցների տնօրենների, դասախոսների, զոհված ազատամարտիկների ծնողների:

Օրն սկսվեց ջրօրհնեքի, աղօրհնեքի, հացօրհնեքի և դպրոցի օրհնության արարողությամբ: Այնուհետև հյուրերը տանտերերի հետ դիտեցին և ունկնդրեցին «Հարսանիք լեռներում» գրական-երաժշտական միջոցառումը. այն հուզիչ էր, հետաքրքիր, բովանդակալից:

Միջոցառման ավարտից հետո դպրոցի տնօրեն Նաիրա Մարտիրոսյանը երախտագիտության և շնորհակալանքի խոսքեր հղեց մեր հերոսներին, նրանց մայրերին և բոլոր նրանց, ում հայրենապաշտպան ու հայրենաստեղծ ոգին խաղաղ գիշերներ ու արևաշող երկինքներ է պարգևել Հայաստան աշխարհին:

Մուշեղ Իշխան

«ԻՄ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՍ»

Նիկոլ Աղբալյանի փարօրինակությունները

Անգամ մը խումբով իջեր էինք Մէյրուպայի ձորը, բոպիկ ոտքերով անցեր գետակը եւ բարձրացեր դիմացի լերան լանջն ի վեր: Բոլորս ալ յոգնած էինք, Աղբալեանի դէմքը կարմրած էր մտահոգիչ ըլլալու աստիճան: «Արիւնը խուժած էր գլխուն», ինչպէս սովորութիւն ունէր ըսելու յաճախ: Բարեբախտաբար մեր շուրջ կը տարածուէին այգիները, ուր մտանք հանգստանալու: Որթատունկերէն կախ էին ինկած քաղցրահամ խաղողի հասուն ողկոյզները: Ի հարկէ կուշտ ու կուռ կերանք բոլորս ալ: Հարցնող տեսնող չկար: Աղբալեան որ մեծ հաճոյքով կը ճաշակէր սաթի գոյն խաղողը, յանկարծ դարձաւ մեզի եւ ըսաւ.

- Միթէ արդա՞ր է մեր ըրածը:

- Ի՞նչն է անարդար,- հարց տուինք զարմացած:

- Բա՛, ուրիշի խաղողն ենք ուտում:

- Հոգ չէ՛,- ըսի,- այսքան մը անարդարութիւն ալ մենք ըրած ըլլանք. աշխարհ մեզի հանդէպ շա՜տ անարդար գտնուած է, պր. Աղբալեան, ո՞ւր են մեր այգիները:

- Դա ուրիշ հարց է,- պատասխանեց ընկերվարական գաղափարներու ջերմ պաշտպանը: Մենք ուտում ենք գիւղացի այգեպանի իրաւունքից:

Մեկնելու պահուն Աղբալեան քանի մը դահեկան հանեց գրպանէն եւ դրաւ այգիի մուտքին ինկած մեծ քարին վրայ:

Մոսկվայի հայկական կիրակնօրյա դպրոցում

Փետրվարի 10-ին ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցում միջին և բարձր դասարանների հերթական բաց դասը նվիրված էր Տեառնընդառաջին (Տրնդեզ), որ նշվում է փետրվարի 14-ին, և սիրահարների բարեխոս Սբ. Սարգիս ազգային տոնին:

Բաց դասն անցավ ինքնատիպ մթնոլորտում. ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցի տնօրեն, մանկ. գիտ. թեկնածու Շողիկ Փահլևանյանի հրավերով բաց դասի հատուկ հյուրն էր «Նուբար» հայկական ազգագրական երգի և պարի խմբի գեղարվեստական ղեկավար, ինչպես նաև Հայաստանի Հանրային ռադիոյի «Արմատներ» և «Ազգային պար» հաղորդաշարերի հեղինակ Լուսինե Նազարյանը: Նա ներկայացրեց, թե ինչպես են նշում Տեառնընդառաջի և Սուրբ Սարգսի տոները՝ համեմելով իր խոսքը հայկական ազգագրական գեղեցիկ երգերով:

Այնուհետև դպրոցի լրացուցիչ կրթության ուսուցչուհի Քնարիկ Վարդանյանն ամբողջացրեց վերոհիշյալ տոների մասին տեղեկատվությունը:

Այդ ամենին էլ ավելի տոնական տրամադրություն հաղորդեց ավանդական ուտեստներով հագեցած սեղանը (աղի բլիթ, հալվա, փոխինձ, աղանձ, գաթա և այլն):

Դպրոցի սաների և ուսուցչուհիներ Շողիկ Փահլևանյանի, Աննա Հովհանյանի, Արփի Սամվելյանի, Նոնա Ռաֆայելյանի ակտիվ ջանքերով օրը վերածվեց իսկական տոնի:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԱՋԻՆԸ

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը և Հայաստանի Ազգային գրադարանը հրատարակել են «Հայաստանի գրադարանները (վիճակագրական վերլուծություն) 2017» գրքույկը: Այստեղ ի մի են բերված հանրապետության գրադարանային համակարգի (թե հանրային, թե բուհական) 2017 թվականի աշխատանքային վիճակագրական տվյալները:

Մանրամասնորեն ներկայացված են պետական համակարգի 17 բուհական գրադարաններ, որոնց թվում նաև Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական գրադարանը: Ուրախությամբ պետք է արձանագրել, որ Մանկավարժականի գիտական գրադարանը 8-րդ անգամ անընդմեջ գրադարանային հիմնական ցուցանիշներով բուհական և հասարակական գրադարանների համակարգում առաջինն է: 2017 թվականին գրադարանն ունեցել է 23.225 ընթերցող, 1.449.618 հաճախում, 3.745.729 տպագիր նյութի (գիրք, ամսագիր, հանդես, թերթ) շրջանառություն-տացք: Տարվա միջին ծանրաբեռնվածությամբ յուրաքանչյուր ընթերցող գրադարանից օգտվել է 62 անգամ (նախորդ տարի ևս եղել է 62) և օգտագործել է 161 տպագիր նյութ (նախոդ տարվա 178-ի դիմաց): Տարվա ընթացքում գրադարանն իր գրքային պաշարը հարստացրել է 7929 միավոր նոր ուսումնական ձեռնարկներով և ամենաժամանակակից հայկական և արտասահմանյան գրականությամբ: Բացի թղթային տպագիր նյութերից գրադարանն իր համակարգչային բազայի օգնությամբ հնարավորություն է տվել ընթերցող ուսանողներին և դասախոսներին՝ գրել և սեփական հասցեին փոխանցել 1.962.697 միավոր ռեֆերատ, կուրսային աշխատանք, մագիստրոսական թեզ, թղթապանակ (նախորդ տարվա 1.834.482-ի դիմաց):

Մանկավարժական համալսարանի գիտական գրադարանի ցուցանիշները հիմնական մրցակից Երևանի պետական համալսարանի Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական գրադարանի ընթերցողների ցուցանիշը գերազանցում են 8225-ով. հաճախումը՝ 5.4 անգամ, տացքը՝ 4.4 անգամ: Գրադարանային ցուցանիշներով Մանկավարժականի գիտական գրադարանը առաջինն է նաև հանրապետության հասարակական գրադարանների համակարգում: Ընթերցողների թվով համալսարանի գիտական գրադարանը զիջում է միայն Ազգային գրադարանին (պակաս ունի 6634 ընթերցող), սակայն 5.4 անգամ գերազանցում է վերջինիս հաճախումների թվով (Ազգային գրադարանի 2016 թ-ի հաճախումներն ընդամենը 267.189 են), 2.4 անգամ տացքի թվով: Հասարակական մյուս գրադարանների՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի հիմնարար գիտական գրադարանի, Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի վիճակագրական տվյալները շատ ցածր են:

Մանկավարժական համալսարանի գիտական գրադարանի հաջողությունները համալսարանի ղեկավարության արդյունավետ ղեկավարման և կոլեկտիվի նվիրված աշխատանքի, ինչպես նաև գրադարանում իրականացվող ու տպագիր նյութի պրոպագանդմանը նվիրված միջոցառումների արդյունք են (նոր գրքերի ամենշաբաթյա ցուցադրություն-ցուցահանդեսներ, ամենամյա «Լավագույն ընթերցող» միջոցառում և նույնանուն գրքույկի հրատարակում, «Չորեքշաբթի» գրական ակումբի ամենշաբաթյա հանդիպում և «Չորեքշաբթի» գրական ժողովածուի հրատարակություն, շաբաթվա բոլոր աշխատանքային օրերին ուսանողների, դասախոսների, այլ բուհերի ուսանողների, համալսարանի և Երևան քաղաքի այլ դպրոցների աշակերտների սպասարկում, շաբաթ և կիրակի օրերին քաղաքացիների սպասարկում):

Աննա ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Ընթերցասրահների բաժնի վարիչ

Պարարվեստի մանկավարժության ամբիոնի դասախոս Գարեգին Գևորգյանը 60 տարեկան է: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակում ժամանակակից գրականությունն է, մասնավորապես պոեզիան: 2012 թվականին նա հրատարակել է «Ապրելու իրավունք» բանաստեղծական ժողովածուն, որտեղ զետեղված բանաստեղծությունները փաստում են բանաստեղծական բարձր ճաշակի, մարդկային արժեքների և կյանքի սկզբունքային հարցերի հանդեպ նրա գեղագիտական ընկալումների մասին:
Շնորհավորում ենք Գ. Գևորգյանին և մաղթում նրան բանաստեղծական նորանոր վերընթացներ, որոնք էլ ավելի կամբողջացնեն բանաստեղծական ներաշխարհի համարձակ ու անքեն դրսևորումները:
Ստորև ներկայացնում ենք հոբելյարի բանաստեղծություններից մի ընտրանի:

Ս. Ա.

Ուջան գյուղ

Փշածաղիկը ծաղկում է այստեղ
հուլիսի կեսին լուռ ու աննկատ,
երբ միջօրեի խաղաղության մեջ
ծերերի զրույց-կարոտն է ձգվում
քարափներն ի վեր որպես սփոփանք:
Երբ մութն է գալիս ձորերի միջով
համրաքայլ, ծածուկ ու միանգամից,
թոնրատան շեմին կույր ու խուլ տատը
իր աչքով տեսած Մուշ հավքի մասին
հեքիաթ է ասում իր թոռան համար:
Պաղ լուսաբացին տաքուկ անկողնուց
երբ հեռանում է թևն այդ թռչունի,
Մարուքա սարին մի գինարբ ծաղիկ
հին ու մենակյաց իր երազի մեջ
հեռացածների հուշն է օրորում,
որ մեղուները այցի գան նորից.-
արդեն գարուն է Սասնա սարերում:

Հողածինը

Օ՜, ժամանակ անպատեհ,
որ դրեցիր մարմնիս Կշեռքին,
երբ հոգիս թափառում էր
մորս երազներում:
Օ՜, ծննդյան օր,
երբ աշնան հասուն այգու մեջ՝
հորս խնդության հետ
հավքն էր տխուր երգում:
Օ՜, ծննդավայր,
ուր մարդիկ անպաշտպան էին,
ինչպես վաղ գարնան
ծաղկած ծիրանենին:
Օ՜, մանկություն,
որ ինձ տարար անգիտորեն
իմ գաղթական տատուպապի
անպատմելի ցավի միջով:
Օ՜, առաջին սեր,
անխղճորեն ինձ խաբեցիր
այն աղջկա զույգ ծամերով՝
դպրոց տանող ճանապարհին:
Օ՜, հայրենիք,
Ասա՛ ինձ,
Ինչո՞ւ են զավակներդ
գնչուների նման
Մինչ օրս քեզ որոնում:
Օ՜, Երկնային տեր,
Ծնողներիս շիրիմները
Սրբազան դարձրին այս Հողը.
ես կմնամ այստեղ:

Սովորական հայի ճակատագիր

Եկա այնտեղից, ուր լուսաբացին
մայրս անաղմուկ ելնում էր տնից
և տուն էր դառնում ծղրիդների հետ,
գալիս, նստում էր դարպասի քարին,
մենք էլ լույս տեսած թիթեռների պես
կախ էինք ընկնում նրա փեշերից:

Հիմա այնտեղ եմ, ուր Երկրը իմ
դարձել է տարածք, բնակատեղի,
ուր հերկողները նաիրյան հողի
արդար վաստակով չեն հպարտանում,
ուր ճամփաները տանում փակուղի
կամ էլ օտարի դուռ են ցուցանում:

Երբ հասա այնտեղ, մնացի մենակ,
հասկացա, որ էլ չունեմ ժամանակ՝
պսակ հյուսելու հենց նրանց համար,
ովքեր մեր Ոգուն հար հավատարիմ
վերից նայում են երկրին նաիրյան՝
ցայսօր անպատանք, մերկ ու անշիրիմ:

Հասել եմ այստեղ, ուր մահն անդեմ է,
Ուր տարիներիս կույտը՝ մոտ վաթսուն-,
ուսերիս առած մի ծանր վեմ է,
ուր մանկությանս հուշն է դեռ ջանում՝
հաշտեցնելու ինձ այս օրերի հետ,
ուր թևեր ունի ամեն մի սողուն:

Այսպես ապրեցի և գիտակցաբար
չդարձա որդին այս ժամանակի,
քանզի ծեր էի հանց նախավկա.
Եվ սնել էր ինձ նաիրյան ոգին,
երբ իմ մարմինը հանեցին շուկա,
հոգիս փնտրում էր նրան վերստին:

Կյանքն էլ մի հեքիաթ է

Իջա ես մի օր բարձրիկ լեռներից՝
Ձյուներից ծնված մի զուլալ առու.
Մարմինս ցավեց սուր – սուր քարերից.-
Կյանքի ճանապարհ՝ Չարի և Բարու:

Հոգիս պահեցի ջրերի խորքում,
Որ չպղտորվի, սիրտս չցավի.
Սիրո ծարավն ինձ ներքև էր տանում՝
Ջինջ երազներս խառնելով ցավին:

Օրերը հիմա արագ են չվում,
Չեմ ել հասցնում վայրը իմանալ,
Առաջվա նման սիրտս չի ցավում,
Ոչ էլ ուզում եմ զուր հերոսանալ:

Սարերի ձյունը արդեն չի հալվում,
Ու ցամաքում է առուն օր օրի.
Ինձ չհանդիպեց ծերուկն իմաստուն.-
Հեքիաթն ավարտվեց առանց Խնձորի:

Տատս

Ծեգին վեր էր կենում
Ու դուրս գալիս տնից,
Դրսի գործը պրծնում,
Մեզ հանում էր քնից:

Ես հիշում եմ նրան՝
Միշտ գլխաշոր կապած,
Ծխոտ աչքն էր սրբում,
Թոնրից հանում լավաշ:

Նախշուն գոգնոց ուներ՝
Վրան մեն – մի գրպան,
Երբ էլ լիներ, մեկ է ՝
Մեջը քաղցր մի բան:

Հոգս ու գործից հետո
Խաղաղ մթնշաղին,
Նստում դարպասի մոտ
Ու նայում էր սարին:

Խաթուն տատս մի օր
Գնաց մեր հին տնից.
Ու մինչ էսօր ոչ ոք
Մեզ չի հանում քնից:

Վերազ երկիր

Գրաստների պես՝ խեղճ ու հնազանդ,
Օրերը հիմա ոչինչ չեն բերում.-
Երբ առաջնորդը չունի երազանք,
Ճամփան Երազի Երկիր չի տանում:

Անմարմին մնաց երազը երկրի,
Որին արևն էր սնել նաիրյան.-
Ո՞վ է հնչեցնում փողը նահանջի
Ու բարձրաձայնում՝ Մահն է իմացյալ…

Ու ճամփաները՝ կարծես սարդոստայն
Մեզ չեն տանելու լուսավոր հեռուն.-
Քանզի վարժվեցինք ապրել միմիայն
Նախամարդու պես լոկ կեր փնտրելուն:

Հիմա օրերի բեռան տակ կքած
Արդ ի զորու չենք երկնքին նայել.-
Անձայն տնքում է հողը նաիրյան՝
Դարձյալ անկարող Միերին պահել…

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

Լույս է տեսել Ջուլիետա Հարությունի Գյուլամիրյանի «ՄԱՅՐԵՆԻԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ» ուսումնական ձեռնարկը, որը երաշխավորել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Գիտական խորհուրդը:

«Գիրքը նախատեսված է մանկավարժական բուհերի տարրական դպրոցի ուսուցիչներ պատրաստող բաժինների ուսանողների, ինչպես նաև կրտսեր դպրոցականների կրթադաստիարակչական հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների համար: Ձեռնարկը օգտակար կլինի նաև 5-րդ և 6-րդ դասարաններում «Մայրենի» առարկան դասավանդող ուսուցիչների համար, քանի որ կրթության այս օղակում ևս մայրենիի դասը համակցված է և կազմակերպվում է բացառապես ընթերցանության մեթոդով»:

Ինչպես նշում է հեղինակը գրքի ներածության մեջ, «ապագայի հայ ուսուցչի կերպարով ու գործունեությամբ է մեծապես պայմանավորված հայ մանուկների հայեցի կրթությունը, ուրեմն՝ մեր ժողովրդի հարատևման գրավականը»:

Հեղինակը վստահեցնում է, որ դասագիրքը կօգնի ուսանողներին՝ հայ մանուկների կրթության գործում հարստացնել իրենց գիտելիքներն ու կարողությունները: Գրքում ներկայացված են ոչ ոչ միայն գրաճանաչության և կարդալու, գրագետ խոսք կառուցելու կարողությունների ձևավորման մեթոդները, այլև մայրենիի ուսուցման մեթոդիկան:

«Դասագիրքն ստեղծելիս և այն հրատարակման պատրաստելիս առաջնորդվել ենք ոչ միայն հայ դպրոցում մեր կատարած ուսումնասիրությունների արդյունքներով, ուսուցիչների և մեր գործընկերների կարծիքներով ու դիտողություններով, այլև ուսանողական լսարանում ապագա ուսուցիչների՝ այս դասընթացի յուրացման գործընթացի դժվարություններով, այս գրքով աշխատելիս ուսանողների առջև ծագած խոչընդոտներով, մասնագետների հետ իրականացրած քննարկումների ընթացքում ներկայացված տարաբնույթ պարզաբանումներով»,-ներածության մեջ ընդգծում է հեղինակը:

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ՁԵՌՆԱՐԿ «ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ կրթության և գիտության նախարարության երաշխավորությամբ լույս են տեսել տարրական դասարանների ուսուցիչներին հասցեագրված «Տեխնոլոգիա» առարկայում ինտեգրվող ձեռնարկատիրական կրթություն» ուսուցչի ձեռնարկները 2- րդ, 3-րդ և 4-րդ դասարանների համար: Ձեռնարկը տպագրվել է ՀՀ ԿԳ նախարարության և «Հայաստանի պատանեկան նվաճումներ» հասարակական կազմակերպության միջև կնքված հուշագրի շրջանակներում: Ձեռնարկի հեղինակներն են Արմինե Հովհաննիսյանը, Անահիտ Մանուկյանը («Հայաստանի պատանեկան նվաճումներ» ՀԿ), ՀՊՄՀ Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի դոցենտ Կարինե Պապիկյանը:

Ձեռնարկները նախատեսված են 2-4-րդ դասարաններում ,Տեխնոլոգիաե առարկայում «Ձեռնարկատիրական կրթություն» բաղադրիչի դասավանդումն առավել արդյունավետ դարձնելու համար, ներկայացված են նաև «Տեխնոլոգիա» առարկայի վերափոխված չափորոշիչները և ծրագրերը, որոնք կօգնեն ուսուցիչներին դասերի արդյունավետ պլանավորման, գնահատման և այլ հարցերում:

Ձեռնարկում հնարավորինս մատչելիորեն ներառված են ձեռնարկատիրական կրթության հետևյալ կարևոր բաժինների՝ *ձեռներեց և ձեռներեցություն*, *բիզնես գաղափար*, *շուկայի հետազոտություն*, *բիզնես պլան և բիզնես էթիկա* թեմաների վերաբերյալ տեսական գիտելիքներ և դասավանդման մեթոդներ: Դրանց օգնությամբ սովորողները ձեռք կբերեն արդի աշխարհում չափազանց կարևոր բնագավառի՝ ձեռնարկատիրության վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ: Դասագիրքը կօգնի ուսուցիչներին ճիշտ կազմակերպելու ձեռնարկատիրական կրթության բաղադրիչի ինտեգրումը տեխնոլոգիայում՝ նպաստելով այս երկու կարևոր բանգավառների՝ միասին և արդյունավետ ուսումնառությանը:

Ձեռնարկն անվճար տրամադրվում է Հայաստանի Հանրապետության բոլոր դպրոցների՝ «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպության կողմից վերապատրաստված ուսուցիչներին:

Սիրո տոն՝ հրաշքներին հավատալու օր

Աշխարհի մի շարք երկրներում նշվում է սիրահարների օրը կամ Սուրբ Վալենտինի տոնը: Հայաստանում թեև սիրում են տուրք տալ օտար, դրսից ներմուծված տոներին, այնուամենայնիվ, Հայաստանում վերջին տարիներին երիտասարդությունն սկսել է նշել Սուրբ Սարգսի տոնը: Այն ոչ միայն սիրահարների, այլև սիրո տոն է: Աղի բլիթ, սիրո խոստովանություններ, ծաղկեփնջեր… Փետրվարի 16-ին Հայ առաքելական եկեղեցին նշում է Սուրբ Սարգիս զորավարի (տոնացույցում՝ ,Առաջավորաց պահքե) տոնը: Այն Ամենայն Հայոց Գարեգին Բ հայրապետի տնօրինությամբ հռչակվել է Երիտասարդների օրհնության օր:

Երիտասարդների բարեխոս Ս. Սարգիս զորավարի

հիշատակության օրը Հայ Առաքելական եկեղեցու կողմից հռչակվել է նաև Երիտասարդների օրհնության օր: Այս տարի այն նշվում է փետրվարի 16-ին:

Ս. Սարգիս զորավարն ամենասիրված սրբերից է: Իր որդու՝ Մարտիրոսի և 14 քաջ մարտիկների հետ նա նահատակվել է հանուն քրիստոնեական հավատքի: Քրիստոնեական հավատքի համար նահատակվում են նաև Ս. Սարգսին հավատարիմ տասնչորս զինվորները:

Ս. Սարգիս Զորավարի տոնը Հայաստանում ընդունված է նշել ոչ միայն եկեղեցական ծեսով, աղոթքով, այլև ժողովրդական սովորույթներով, որը մեզանում նվիրական ավանդություն է: Ս. Սարգիս զորավարը երիտասարդների արագահաս բարեխոսն է: Նրա միջնորդությամբ հրաշքներ են տեղի ունենում: Այդ օրը երիտասարդներն դիմում են սրբին, որ իրենց աղոթքները հասցնի առ Աստված:

Երիտասարդները տոնի առթիվ միմյանց բացիկներ և քաղցրավենիք են նվիրում: Տոնի օրը Ս. Սարգիս Զորավարի անունը կրող եկեղեցիներում մատուցվում է Սուրբ Պատարագ, որից հետո կատարվում է երիտասարդների օրհնության կարգ:

Սբ. Սարգսի տոնով սկսվում է Բարեկենդանը, որին անմիջականորեն հաջորդող Մեծ պասի 49–օրյա շրջանն ավարտվում է Զատիկով: Տոնը Հայաստանում ընդունված է նշել ոչ միայն եկեղեցական ծեսով, այլև ժողովրդական սովորույթներով: Սուրբ Սարգսի տոնին նախորդող գիշերը երիտասարդ աղջիկներն աղի բլիթ են ուտում և ակնկալում՝ երազում տեսնել իրենց ապագա փեսացուին, ում տված ջուրը պետք է հագեցնի իրենց ծարավը: Այսպես, ըստ ավանդույթի, եթե մատուցվող ջրի բաժակը ոսկուց է լինում, ապա ասում են, որ ապագա ամուսինը շատ հարուստ է լինելու, եթե արծաթից է՝ միջակ հարուստ, իսկ եթե պղնձից կամ կավից՝ աղքատ: Ջրի քանակությամբ ևս փորձում են գուշակել ապագա փեսացուի կամ հարսնացուի հետ ապրելու տարիների տևողությունը: Ընդունված է նաև տան տանիքին կամ պատշգամբում սկուտեղով փոխինդ դնել. ավանդության համաձայն սիրո բարեխսոը հրեշտակների ուղեկցությամբ պետք է անցնի և ում մատուցարանի մեջ դրված ալյուրի կամ փոխինդի մեջ թողնի իր սպիտակ (մաքրություն, անաղարտություն է խորհրդանշում) ձիու պայտի հետքը, այդ տարի կիրականանա տվյալ երիտասարդի երազանքը: Պատկերագրության մեջ երիտասարդների արագահաս բարեխոսը պատկերվում է ձիու վրա նստած՝ վիշապին խոցելիս: Հիմնականում սուրբը պատկերվում է իր որդու՝ Մարտիրոսի հետ միասին:

Նախկինում Սբ. Սարգսի տոնին երեխաները ևս նվերներ են ստացել. երդիկից կախված գուլպաների մեջ տատիկները դրել են տոնի ծիսական կերակուրներից և մի քանի մանրադրամ:

Սիրո արտահայտչամիջոցները շատ են, պատճառները՝ չմեկնաբանված, անկախ տոների քանակից սիրով և սիրո մեջ ապրեք ամեն օր: Փետրվարի 16-ը սիրո տոնն է, ոմանց համար աղաբլիթ ուտելու, ոմանց համար էլ հրաշքներին հավատալու օր է:

Սբ. Վալենտի՞ն, թե՞ Սբ. Սարգիս. նախապատվությունը երիտասարդներինն է, տոնացույցում առանձնացված այս երկու օրերը սիրահարների համար պարզապես ևս մեկ առիթ են՝ միմյանց ներկայությունը վայելելու, իրար սեր խոստովանելու, նվերներ մատուցելու:

Սյուզի ԿՂՄԵՍՅԱՆ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժական համալսարանը սահմանում է Ռուբեն Սևակի անվան ամենամյա մրցանակ: Մրցանակը՝ 1000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, կիսվանավորի բանաստեղծի եղբորորդին՝ բարերար Հովհաննես Չիլինկիրյանը:

Մրցանակի համար կարող են դիմել Մանկավարժական համալսարանի ուսանողները և բուհի Հենակետային (ավագ դպրոց) վարժարանի սաները՝ ներկայացնելով հայ բանաստեղծ, արձակագիր, բժիշկ Ռուբեն Սևակի (Չիլինկիրյան Ռուբեն Հովհաննեսի 1885-1915) մասին խոհագրություն (15-20 տպագրված էջերի սահմանում):

Ցանկացողները կարող են նյութերն ուղարկել մինչև 2019 թվականի փետրվարի 28-ը ներառյալ՝ info@aspu.am հասցեին, կամ ներկայացնել ՀՊՄՀ քարտուղարություն (Տիգրան Մեծի 17, 1- ին հարկ, 104 աշխատասենյակ):

***

Առկա ուսուցմամբ սովորող ուսանողների 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսման վարձի զեղչի դիմումները համապատասխան փաստաթղթերով ընդունվում են փետրվարի 11-ից մինչև մարտի 7-ը:

Մեր թերթի նախորդ համարի (№1) 5-րդ էջի Ամիդա Թոփուզյանի «ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ» հոդվածի վերևից 4-րդ տողում Լաուրա Ասատրյանի փոխարեն կարդալ Սամվել Ասատրյան:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 18.02. 2019 թ.
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ